մից դուրս չեն բերում և որքան որ երկար է տևում ձմեռը, նոյնքան ժամանակ էլ նրանք բոլորովին բանտարկուած են մնում ախոռի մէջ։ Վայրի կենդանիներից լեռներում և դաշտերում կան վագր (խիստ սակաւ է), գայլ, աղուէս, այծեամ, եղջերու, վարազ, նապաստակ (ալապտրակ), ճագար, խոզ, խլուրդ, ոզնի, առնէտ չաղալ. մանաւանդ յատնի է Փէրիան բազմաթիւ ճաւերով ու թռչուններով՝ հաւ, աքլոր, լոր, ջրի լոր, կաքաւ, աղաւնի, սագ (ղազ) և բադ (քիչ են), հնդկահաւ (քիչ է), ագռաւ, անծեղ, ճնճղուկ, ծիտ. արտուտիկ, (արտերի մէջ բնակւող մի տեսակ թռչուն է), դեղձանիկ, բազէ, կաչաղակ, յոպոպ, բու (բայղուշ), ծիծեռնակ, կռունկ, սոխակ (բլբուլ), տատրակ (աղաւնու նման՝ բայց բարձրավիզ գեղեցիկ մի թռչուն է), սարեակ, արծիւ, բազէ, մարթախափուկ (չորան խաբողիկ), ներկարար, լաշխոռ. ճանճայիկ թռչուններից՝ արագիլ. մագլցողներից՝ փայտփոր (ծառ ծակող). սողուններից՝ մողէս, օձ (զանազան տեսակի), կրիայ. երկակեցցաղներից՝ գորտ. միջաւներից՝ բզէզ, ճպուռն, թրթռուր, մարախ, մեղու. խեցեմորթերից՝ խեչափառ, խխունջ. որդուցիք կամ ժժմուցիքից՝ տզրուկ, որդ. առատ է նաև զեռուններով ու մրջիւններով։

* * *

Ներիր սիրելի Վարդուհի, որ նկարագրութիւնս մի փոքր երկար եղաւ. ես դիտմամբ այդպէս արի, որովհետև գիտեմ՝ Դու էլ ինձպէս բնութեան, ծաղկի, գեղեցկութեան խենդ սիրահար ես. Դու էլ պաշտում ես բնութեան գեղեցկութիւնը, փնտռում շքեղն ու վսեմը. իւրաքանչիւր դաշտ ու բլուր, սար ու ձոր և բոյս ինձ էլ խիստ յափշտակում են և Դու կուզես անվերջ լսել, կարդալ նրանց մասին, որովհետև, ինչպէս ասեցի, բնութեան սէրը, պաշտամունքը Քու մէջ էլ զօրեղ է։ Ա.հա սիրելիս, այդ հանգամանքն ի նկատի ունենալով՝ ես Քեզ գրեցի մանրամասնօրէն այդ գաւառի կլիմայական — տեղագրական կազմութեան և այլ երևոյթների մասին, թէև չգիտեմ, թէ իսկապէս կարողացայ բաւարարութիւն տալ Քո ցանկութեանը, այդ ինձ անորոշ է.